**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 2**
**02.03.2026 թ. կնքված N ԵՔ-ԲՄԽԱՇՁԲ-26/3-1 գնման պայմանագրի**

ք. Երևան «21» «05» 2026թ.

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետ Վ.Պապիկյանի, որը գործում է Երևանի քաղաքապետի 14.11.2018 թվականի թիվ 3407-Ա որոշման հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Շինմաստեր» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Ռ. Բադալյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, երկուսը միասին՝ (այսուհետև՝ Կողմեր), ղեկավարվելով Գնումների մասին օրենսդրությամբ և հիմք ընդունելով 02.03.2026թ. կնքված N ԵՔ-ԲՄԽԱՇՁԲ-26/3-1 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.6 կետը և Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կոմունալ տնտեսության վարչության կողմից ներկայացված գրությունը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

## 1.Համաձայնագրի առարկան

Հետագա համագործակցության նպատակով կողմերը որոշեցին՝

1.1 Պայմանագրով սահմանված ***4-րդ չափաբաժնի*** կատարման ժամկետը երկարաձգել 30 (երեսուն) օրացուցային օրով:

## 2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով ստանձնած կողմերի իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

## 3.Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| **ՊԱՏՎԻՐԱՏՈՒ** | **ԿԱՏԱՐՈՂ** |
|---|---|
| Երևանի քաղաքապետարան<br>ք. Երևան, Արգիշտի փ. 1<br>ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն<br>Հ/Հ 900012410032<br>ՀՎՀՀ 02593108 | «ՇԻՆՄԱՍՏԵՐ» ՍՊԸ<br>ք. Երևան, Երզնկյան 22շ., բն. 26<br>«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ<br>ՀՀ 220553331582000<br>ՀՎՀՀ 08417768 |
| Վ. Պապիկյան ________ (ստորագրություն) Կ.Տ. | Ռ. Բադալյան ________ (ստորագրություն) Կ.Տ. |